ԶԱՎԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ ՀՅԴ ՄԱՄՈՒԼԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ (1909-1915, 1918- 1922 ԹԹ.)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

Օսմանյան Թուրքիայում հրատարակված ՀՅԴ կուսակցական և նրան համակիր պարբերականները 1909-1915 թթ. և 1918-1922 թթ. իրենց ուշադրության կենտրոնում էին պահել պատրիարքի և պատրիարքարանի գործունեությունը: Սա չի նշանակում, որ նույն շրջանում այնտեղ տպագրված արևմտահայ մյուս պարբերականները անտարբեր կեցվածք ունեին ազգային այդ կարևոր կառույցի նկատմամբ: Պարզապես ՀՅԴ պարբերական հրատարակություններն ավելի կտրուկ էին իրենց գնահատականներում և հիմնականում քննադատորեն էին վերլուծում պատրիարքարանի գործելակերպը՝ պահանջելով ավելին, քան պատրիարքարանը իրավատու էր իրականացնել Օսմանյան Թուրքիայում: Քննադատությունների կիզակետում էին հայտնվում այն հոգևորականները, որոնք չարաշահում էին իրենց դիրքը, պաշտոնը կամ հոգևոր հովվին անհարիր վարք ու բարքով էին աչքի ընկնում: Օրինակ՝ Զմյուռնիայի «Աշխատանք» թերթում 1913-1914 թթ. չկար որևէ համար, որտեղ չմերկացնեին առաջնորդ Մատթեոս ծայր. վարդապետ Ինճեյանին, մասնավորապես տեղի կրթական-մշակութային կյանքում նրա կողմից շարունակ վիճաբանություններ հարուցելը և ապօրինի, միանձնյա որոշումներ կայացնելը: ՀՅԴ կուսակցական և համակիր մամուլը յուրօրինակ հարգալից վերաբերմունք ուներ, սակայն, Զավեն արք. Տեր-Եղիայանի՝ պատրիարքի նկատմամբ[1], թեև նա նույնպես հոդվածների ենթատեքստերում արժանանում էր քննադատության, որոնցում հիմնականում նշվում էր ոչ թե նրա, այլ պատրիարքարանի անունը: Զավեն պատրիարքը բացառիկ ազգասեր ու հայրենանվեր անձնավորություն էր, որը վայելում էր գրեթե ողջ ժողովրդի հարգանքն ու մեծարանքը: Դա արտահայտված է ժամանակի արևմտահայ մամուլում: Օրինակ՝ «Բյուզանդիոնի» 1913 թ. օգոստոսի 31-ի համարում լուր կար Ազգային ժողովի այն նիստի գումարման մասին, որտեղ ձայների ճնշող մեծամասնությամբ պատրիարք էր ընտրվել Դիարբեքիրի առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը[2]:

Զավեն պատրիարքի գահակալությունն ընթացել է 2 փուլով՝ 1913-1916 թթ. և 1918-1922 թթ.: Նա եպիսկոպոս էր ձեռնադրվել 1910 թ.: «Տեր Զաւեն եպիսկոպոս նկարագրով լուրջ անձ մըն էր: Երբեք դրամի մարդ չէ եղած և ուր որ գտնուած է, անշահախնդիր վերաբերում մը ցոյց տուած է»,- գրում էր «Բյուզանդիոնը»[3]:

---

[1] *Կ. Պոլսի հայոց պատրիարքության գործունեությունն առավել հանգամանորեն ուսումնասիրված է Ռ. Մելքոնյանի «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը» (Ե., 2010) աշխատության մեջ:*

[2] *Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 31.VIII.1913:*

[3] *Նույն տեղում:*

«Ժամանակ» օրաթերթը համեստ ու պարտաճանաչ եկեղեցական էր համարում հայր Զավենին, որը հոժարակամ և կարողությունների չափով պաշտոնավարել էր իր թեմում՝ առանց խռովություններ հարուցելու և գեղծումներ անելու կամ խնդիրներ ունենալու, և կարծում էր, որ արևմտահայությունը նրան Մեսիայի պես չպիտի ընդուներ[4]: Այնինչ ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ պատրիարքից նրա ընտրության և պաշտոնավարության շրջանում: Մտածում էին, որ նա պիտի կարողանար թե՛ ազգային մեքենան շարժման մեջ դնել, թե՛ վերականգնել պատրիարքական պաշտոնի «խոնարհած պատկառանքը այնպիսի ատեն մը, երբ ամեն կողմ արհաւիրքով լի էր»[5]: Հայր Զավենը օժտված էր վարչական կարողություններով: Փորձառու հոգևորական էր: Մինչև պատրիարք ընտրվելը նա նպաստընկալ վարժարաններ էր բացել Սպերի, Դերջանի, Խնուսի ու Բասենի հայաբնակ գյուղերում, հիմնել էր Կարինի Կարմիր վանքի որբանոցը և շրջակայքից այնտեղ էր հավաքել հարյուրավոր որբերի[6]: Արևմտահայության մեծամասնությունը հույսեր էր տածում, որ նա կարողանալու էր «պատրիարքական պաշտօնն հասցնել փափաքուած բարձրութեան՝ առանց տարուբերուելու կուսակցական և խմբակցական հովերէ և հոսանքներէ»[7]: Պատրիարքը 1913 թ. սեպտեմբերի 13-ին հանդիպում է Կարինում իրեն ողջունելու եկած արևմտահայ հավատացյալ համայնքի հետ և վստահեցնում, որ «պիտի ըլլայ Գաւառի պատրիարքը և ոչ թէ՝ Պոլսոյ»[8]: Նա համոզված էր, որ իր գործունեությունն արդյունավետ կլիներ միայն այն դեպքում, երբ ազգային մարմիններն ու կուսակցությունները համերաշխաբար կաջակցեին իրեն[9]: Հայր Զավենը Կարինի թերթերից մեկին տված հարցազրույցում նշում էր, որ ինքը պիտի պարբերաբար դիմեր կառավարությանը՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարվող ջարդարարական քաղաքականությանը և ապօրինություններին վերջ տալու ակնկալիքով. «Ինձի այնպէս կ'թուի, թէ կառավարութիւնը կամ չէ՛ հասկցած երկրին պէտքեր և կամ նպատակ չունի իրական բարենորոգումներ մտցնել»[10]: Նրա կարծիքով՝ եթե թուրքական կառավարությունը հայ ժողովրդին իրավահավասար համարեր թուրքերին, ապա բարենորոգումների «խնդրի մը առջեւ չէր գտնուի»[11]:

Ազգային քաղաքական կյանքում, պատրիարքարանին զուգընթաց, անգամ ավելի մեծ դերակատարում ունեին ազգային կուսակցությունները: Այս հանգամանքը չէր խանգարում, որ հայր Զավենը պատրիարքարանի՝ օրեցօր թուլացող լծակները օգտագործեր և դիմեր Կ. Պոլսում տեղակայված հյուպատոսարանների, դեսպանատների պաշտոնատար անձանց, եվրոպական

[4] Ժամանակ, Կ. Պոլիս, 1913, N 1624:
[5] Բյուզանդիոն, 3.IX1913:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Բյուզանդիոն, 25.IX.1913:
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, 5.XII.1913:

երկրներում և ԱՄՆ-ում պաշտոնավարող իր գործընկերներին: «Կեդրոնական կառավարութիւնը այժմ բարեկարգութիւններ մտցնելու ձեռնարկած է, սակայն մինչեւ այժմ եղածները ոչ մէկ հիմնական բան կ'պարունակեն»,- այս կարծիքն էր հայտնել Զավեն արքեպիսկոպոսը իր առաջին ելույթներից մեկում[12]: Օրինակ բերենք, թե նա ինչպես էր պայքարում վանքապատկան և եկեղեցապատկան հողատարածքների բռնագրավումների դեմ կամ դրանք հետ վերադարձնելու համար: 1913 թ. սեպտեմբերի 19-ին «Ազատամարտ» օրաթերթը տեղեկացնում էր, որ Հասան աղան բռնագրավել է Վարագա վանքի Սալախանե գյուղը՝ նույնիսկ առաջարկելով գյուղի հողատարածքը գնել վանքից: Հայր Զավենը Վանի կուսակալին գրում էր, թե անընդունելի են Սալախանեի գնման կամ վարձակալման առաջարկները. «Ազգը կ'պահանջէ, որ գիւղը անմիջապէս օրինական թուղթերով վերադարձուի Վարագայ վանքին»[13]:

Զավեն պատրիարքի ժողովրդանվեր գործելակերպը հարուցում էր թուրքական իշխանությունների զայրույթը, որոնք դադարեցրել էին բանակցությունները պատրիարքարանի հետ դեռևս 1913 թ. մարտին[14]: 1913 թ. նոյեմբերից նրանք սպառնագրեր էին ուղարկում պատրիարքարան[15]: 1914 թ. նոյեմբերի 16-ին պատրիարքարանն ստացել էր հետևյալ սպառնագիրը. «Ով հայ գեավուրներ, մինչև մօտ ժամանակներս ձեր թերթերը, ձեր պատրիարքը, ձեր ժողովները, բոլորը ձեր գլուխը պիտի անցնենք»[16]: 1915 թ. հունիսին հայր Զավենը գրում էր, որ օսմանյան պաշտոնական և անպաշտոն անձանց արված բոլոր թախանձանքներն ու «լացերը» կամ օտար պետությունների «անպաշտոն և կես պաշտոնական» դիտողությունները որևէ ազդեցություն չգործեցին հայերի նկատմամբ թուրքական պետության որդեգրած ցեղասպան քաղաքականության վրա[17]: 1915 թ. դեկտեմբերի 28-ին նա ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Արսեն ծայր. վարդ. Վեհունուն տեղեկացնում էր, որ հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրը հղացել էր թուրքական կառավարությունը[18]: «Հայաստան առանց Հայու. այս է օսմ. կառավարութեան ծրագիրը»,- գրում էր հայր Զավենը 1915 թ. հուլիսի 30-ին բուլղարահայերի հոգևոր առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրյանին՝ նրան խնդրելով Ազգային պատվիրակությանը և վեհափառ կաթողիկոսին տեղյակ պահել Հայոց ցեղասպանության

---

[12] Նույն տեղում, 25.IX.1913:

[13] Ազատամարտ, Կ. Պոլիս, 1913, N 1625:

[14] Ազգային մարմինները և պատրիարքարանն առավել գործուն էին 1912- 1914 թթ.՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների և Հայկական հարցի քննարկման ժամանակաշրջանում [(տե՛ս **Խառատյան Ա.,** Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. 18-րդ դարի սկիզբ - 1923 թ. (www.hpj.asj-oa.am)]:

[15] **Լեւոն Վարդան,** Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 35:

[16] Նույն տեղում, էջ 287:

[17] **Կիրակոսյան Զ.,** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Ե., 1983, հ. 2, էջ 37:

[18] Նույն տեղում:

վերաբերյալ[19]: Պատրիարքի կարծիքով՝ անհրաժեշտ էր դիմել քաղաքակիրթ ազգերի օգնությանը: «Ազատենք հիմա ինչ որ կրնանք»,- նշված էր հայր Զավենի՝ 1915 թ. օգոստոսի 25-ին գրված նամակում[20]: Պատրիարքը բռնագրավման ենթակա հայկական հաստատությունների՝ օսմանյան բանկերում պահ տրված գումարները կարողացավ փոխանցել պատրիարքարանի հաշվին և հաջողեց աքսորված կամ կարիքի մեջ գտնվող իր ազգակիցներին փոխանցել նրանց կուտակային գումարներից[21]: 1916 թ. օգոստոսի 10-ին թուրքական իշխանությունների կողմից արևմտահայերի Ազգային սահմանադրությունը վերացնելու հետ միասին փակվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունը, իսկ Զավեն պատրիարքն աքսորվում է Մոսուլ: 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո վերաբացվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունը: 1919 թ. փետրվարի 19-ին Զավեն արքեպիսկոպոսը վերստին ստանձնում է պատրիարքի պարտականությունները[22]: Այդ մասին լուր կար «Ճակատամարտ» օրաթերթում[23]: Ժողովուրդը նրա մեջ գնահատում էր այն պարկեշտ մարդուն, որը մինչև վերջ՝ «չլքեց պատնեշը», չվաճառեց խիղճը և «Բ. Դռան գետնատող պողոտային տեղ նախընտրեց աքսորի ճամփան»[24]: Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ Շահեն ծայր. վարդ. Գասպարյանը 1919 թ. հուլիսի 29-ին հայր Զավենին ուղարկած նամակում համայնքի անունից ողջունում էր նրա վերադարձը[25]: Զավեն պատրիարքը 1921 թ. ապրիլի 23-ին շրջաբերականով դիմում է ժողովրդին, որ մասնակցեն Հայոց ցեղասպանությանը զոհ գնացած նահատակների հիշատակին ապրիլի 24-ին Կ. Պոլսի մայր եկեղեցում տրվելիք հոգեհանգստի պատարագին, որով այդ օրը հարգվելու էր Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը[26]: Նա նախագահում է վերաբացված՝ Ազգային երեսփոխանական ժողովի մարտի 14-ի նիստում և առաջարկում է շտապ ընտրել Կրոնական և Քաղաքական ժողովների պետերին[27]:

Պատրիարքի նախաձեռնությամբ ստեղծված Տարագրելոց, Նպաստամատույց, Որբախնամ և այլ հանձնախմբերն ու Հայ կարմիր խաչը[28] ոչ միայն օգնում են ցեղասպանությունը վերապրածներին, այլև տվյալներ են հավաքում թուրքերի մոտ ապօրինի պահվող հայ կանանց և որբերի մասին: Անտանտի

---

[19] **Զաւէն արք.,** *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 131-136:*

[20] *Նույն տեղում, էջ 149:*

[21] **Խառատյան Ա.,** *նշվ., աշխ. (www.hpj.asj-oa.am)*

[22] **Զաւէն արք.,** *նշվ. աշխ., էջ 277:*

[23] *Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1919, N 87:*

[24] *Նույն տեղում:*

[25] **Ավագյան Ք.,** *ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությունը, Ե., 2000, էջ 195:*

[26] *Ժողովրդի ձայն (Ժամանակ), Կ. Պոլիս, 23.IV.1921:*

[27] *Ճակատամարտ, 1919, N 106:*

[28] *1919 թ. փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային խնամատարությունը, որը մասնաճյուղեր էր հիմնել Կ.Պոլսի բոլոր թաղերում և բացել էր գաղթականների կայաններ ու որբանոցներ: Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային կարմիր խաչին (տե՛ս* **Զաւէն արք.,** *նշվ. աշխ., էջ 280):*

ուժերի գործադրած ճընշման հետևանքով Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը 1919 թ. փետրվարի 5-ին հրաման էր ուղարկել գավառներ, որով պահանջում էր «մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին»[29]: «Ճակատամարտ» օրաթերթը գրում էր, որ Ֆերիտ փաշայի օրոք թուրքական կառավարությունը թեև արտաքին ճնշումների ազդեցության տակ հայտարարությունով դիմել էր իսլամ ազգաբնակչությանը՝ հայ համայնքին հանձնել իսլամացված հայ որբերին, բայց պարզ էր, որ «կառավարութիւնը չ'ուզէր յանձնել իսլամացուած հայ որբերը»[30]: Այդ հայտարարությունն այնպես էր շարադրված, որ յուրաքանչյուր թուրք կարողացավ ըմբռնել դրա բուն էությունը, այն է՝»անշուշտ որ չէք յանձներ»[31]: Հարյուրավոր էին այն որբուկները, որոնք փոքր էին եղել և չէին հիշում իրենց հայ լինելու հանգամանքը: Հարյուրավոր էին նաև այն որբերը, որոնք սպառնալիքի տակ ուրանում էին իրենց ազգությունը[32]: Վերապրողների կարիքները հոգալու համար անհրաժեշտ էր հանգանակել մեկ միլիոն օսմանյան ոսկի: 1919 թ. ապրիլի 12-ին Զավեն պատրիարքը հայ ավետարանական համայնքի ազգապետ Զենոբ Պեզճյանի և հայոց կաթողիկոսի պատրիարքական տեղապահ արքեպիսկոպոս Սայեղյանի հետ տարածում են կոչ (այն տպագրվել է ժամանակի արևմտահայ մամուլի էջերում), որով դիմում էին ազգաբնակչությանը՝ «միասնական նվիրատվական սնդուկի» հաստատման համար[33]. «Անոնք՝ ահաւոր եղեռնական թանկագին խլեակները, մեր հայրենի աշխարհի հաստատութեան սիւները պիտի ըլլան, կորսուելու վրայ են…Աններելի ոճիր մը պիտի ըլլար մեզի համար լուռ հանդիսատեսներ ըլլալ չփրկելու համար մեր սիրելիները մահուան ճիրաններէն»[34]: 1919 թ. սեպտեմբերին Ազգային երեսփոխանական ժողովն ընդունում է օրենք, որի համաձայն՝ յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության չափով վճարել «Հայ-ռենիքի տուրք»՝ երկու տարբերակով՝ միանվագ կամ ամսական: Պատրիարքարանը այդ տուրքի ստացագիրն էր պահանջում որևէ հարցով իրեն դիմողներից և չէր օժանդակում տուրքը չվճարողներին: Նույն կերպ էին վարվում Կ. Պոլսի եկեղեցիների թաղական խորհուրդները, որոնք մերժում էին մկրտության, ամուսնության և հուղարկավորության արարողությունների համար իրենց դիմող այն թաղայիններին, որոնք «նիւթական կարողութիւն ունէին և չէին ներկայացներ «Հայրենիքի տուրքի» ստացագիրը»[35]: ՀՅԴ-ին համակիր կամ ոչ պաշտոնական մամուլի օրգանները ողջունում էին Զավեն պատրիարքի եռանդուն գործելակերպը և ազգային մարմինների աշխատանքը հունի մեջ դնելու նրա ծրագրերը: Միևնույն ժամա-

---

[29] **Մելքոնյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 65:*

[30] *Ճակատամարտ, 3.I.1920:*

[31] *Նույն տեղում:*

[32] *Նույն տեղում:*

[33] *Նույն տեղում, 12.IV.1919:*

[34] *Նույն տեղում:*

[35] **Զաւէն արք.,** *նշվ. աշխ., էջ 280-281:*

նակ, այդ պարբերականները, թեև ըմբռնում էին այդ ծրագրերը խոչընդոտող օբյեկտիվ պատճառները, բայց գտնում էին, որ անհրաժեշտ էր արագացնել մեկ միլիոն օսմանյան ոսկին հանգանակելու կազմակերպչական աշխատանքները: «Ճակատամարտը» մասնավորապես առաջարկում էր պատրիարքարանը վերակազմավորել կառուցվածքով, կազմով և ծրագրերով: Պատրիարքը պիտի գիտակցեր, որ հակառակ դեպքում «սպիտակ» եղեռն էր սպառնալու մեր ժողովրդին, իսկ դա հավասարազոր էր «կարմիր» եղեռնին[36]: Զավեն պատրիարքը լսում էր պատրիարքարանի կամ իր հասցեին հնչող քննադատությունները, բայց ժամանակ չէր վատնում դրանց պատասխանելու վրա: Նա շարունակում էր իր ազգափրկիչ առաքելությունն ի կատար ածել, քանի դեռ հնարավորություն և գործելու իրավունք ուներ: 1919 թ. մայիսի 17-ին տարածում է շրջաբերական-կոնդակ, որով կոչ էր անում տարագրյալներին ու որբերին միայն «ավելացածէն բաժին չհանել»[37]: Հաջողության էական պայմանը համարում էր համազգային գործակցությունը և համերաշխությունը. «Ժամանակը սուղ է: Լուրջ ու կազմակերպուած աշխատանքի պէտք կայ»[38]:

1920 թ. դեկտեմբերի 30-ին օրաթերթում տպագրում են Զավեն պատրիարքի կազմած՝ որբերի փրկության ծրագիր-հրահանգը: Այն ուղղված էր Որբախնամի թաղային մասնաճյուղերին: Տեղեկացվում էր, որ որբերի փրկության Կենտրոնական մարմնի որոշմամբ, Կաղանդից մինչև Ս. Ծնունդ (դեկտեմբերի 31-ից հունվարի 6-ը) ընկած ժամանակահատվածը հռչակված էր «Որբերի փրկության շաբաթ»: Այդ օրերին մասնաճյուղերի անդամները պիտի ջանային ժողովրդին ներկայացնել որբերի ճգնաժամային կացությունը և առաջարկեին հրաժարվել գոնե այդ տոների առթիվ կատարվելիք բոլոր ծախսերից ու նվերներից՝ նախատեսված գումարը հատկացնելով որբերի օգնության սուրբ գործին: Մասնաճյուղերին հրահանգում էին մինչև հունվարի 15-ը կազմակերպել ամանորյա հանդեսներ, որոնցում կընդգրկեին նաև որբերին և կկազմակերպեին աճուրդներ՝ հօգուտ նրանց[39]: 1922 թ. հունիսի 2-ին, Ազգային պատվիրակաության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ 1918 թ. Մուդրոսի զինադադարից մինչև 1921 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսում հավաքվել էր 1.536.157 օսմանյան ոսկի որբերի և տարագրյալների համար[40]: Այս ձեռնարկներից բացի՝ որբերին օգնելու նպատակով, Զավեն պատրիարքը համագործակցում էր Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերության, միջազգային և հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ՝ կազմակերպելով նրանց աշխատակիցների ու ղեկավարների այցելությունները հայկական որբանոցներ՝ այդպիսով նպաստելով նրանց կողմից նվիրատվությունների հատկացմանը հայ որբերին: Այդ այցելությունները նույնպես լուսաբանվել

---

[36] Ճակատամարտ, 1919, N 927:
[37] Նույն տեղում, 1919, N 108:
[38] Նույն տեղում:
[39] Նույն տեղում, 1920, N 645:
[40] **Զաւէն արք.,** նշվ. աշխ., էջ 282-283:

են արևմտահայ պարբերականների, ի թիվս որոնց նաև ՀՅԴ կուսակցական և համակիր մամուլի էջերում: Որբախնամ ծրագրին զուգընթաց Զավեն արքեպիսկոպոսը շարունակում էր որբափրկիչ աշխատանքները: «Իմ առաջին գործերէս մէկը եղաւ տարագիրները խնամելէ զատ, որբերը հաւաքել փոդոցնե- րէն և իսլամներու տուներէն»,- գրում էր նա իր հուշերում[41]: Մին- չև 1922 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքության և նրա ջանքերով ստեղծված հանձնախմբերի աշխատանքի շնորհիվ բռնաձուլումից փրկվել և հայ համայնքին են վերադարձվել հազարավոր հայ որբեր և առևանգված ու բռնի իսլամացած հայ կանայք ու աղջիկներ: Առաքել Չաքրյանի գլխավորությամբ գործող Որբահավաք մարմինը 1919 թ. մայիսից 1921 թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում «Զեզոք տուն» կոչվող կառույցի հետ «Պոլսոյ մէր գտնուած գրեթէ 4-5000 որբերէն 3000-ը ազատեր է թուրքերու քովէն»[42]: Գավառներում գտնվող հայ որբերի մեծամասնությունը «մնաց թուրքերուն ձեռքը. հարիւր հազարաւոր որբերէն շատ քիչերը կարելի եղաւ ազատել»[43]: Զավեն պատրիարքը դրա պատճառը համարում էր այն, որ Համաձայնական բանակը չէր մտել գավառներ: 1920 թ. հունվարի սկզբին պատրիարքարանը և Քաղաքական ժողովն ընդվզում ու բողոքում են կառավարության այն որոշման դեմ, որով 1000 օսմանյան ոսկի էր հատկացվելու հայ որբերի կարիքները հոգալու համար: Պատրիարքարանը հիշատակագիր է ուղարկում Բ. Դռանը՝ նշելով, որ հայ որբերի խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր 200000 օսմանյան ոսկի: Կառավարությունը հիշատակագրով տեղեկացնում էր, որ Քաղաքական ժողովը ոչ միայն սկզբունքորեն չէր ընդունում այդ գումարը, այլև պահանջում էր վերադարձնել պատերազմի ժամանակ պետության հաշվին գանձված՝ ազգապատկան բոլոր կալվածքների վարձերը, հայկական վանքերից, եկեղեցիներից կողոպտված և Կ. Պոլսի փողերանոցում հալեցված ոսկեղենի ու արծաթեղենի, ինչպես նաև հայկական գավառներում կառավարության կողմից գրավված ու վաճառված հայ ժողովրդի գույքի փոխարժեքը[44]:

Պատրիարքարանը 1921 թ. սկզբներին զեկույցի տեսքով ամփոփել է իր Որբախնամ և Որբափրկիչ ծրագրերի արդյունքները՝ նշելով, որ 63.000 հայ որբեր դեռևս մնում էին մուսուլմանական ընտանիքներում[45]: «Ժողովրդի ձայն» անկախ պարբերականը 1921 թ. փետրվարի 11-ին տեղեկացնում էր, որ պատրիարքարանը Ազգերի դաշնակցության լիգա էր ուղարկել հայ որբերի վիճակին նվիրված իր տեղեկագիրը՝ այդ կազմակերպության իսկ պահանջով: Տեղեկացվում էր նաև, թե առաջիկա գարնանը 3 անձից բաղկացած մասնախումբ էր գալու «Թուրքիա՝ զբաղվելու հայ որբերը փրկելու և

---

[41] Նույն տեղում, էջ 288:
[42] Նույն տեղում, էջ 292:
[43] Նույն տեղում:
[44] Ճակատամարտ, 6.I.1920:
[45] **Մելքոնյան Լ.,** նշվ. աշխ., էջ 66:

ապահովելու գործով»[46]: 1922 թ. պատրիարքարանին տեղեկացնում են, որ «Միլլի կառավարությունը զէնքի տակ առած է Անատոլուի մէջ մնացած հայ որբերէն անոնք, որ անցած են 15 տարին: Ազատ չեն մնացած նոյն իսկ ամերիկեան որբանոցներուն աշակերտները»[47]: Հայր Զավենն այս արհավիրքից որբերին փրկելու գործում նոր ուղղություն էր որդեգրել. նրանց տարհանել հիմնականում քրիստոնյա ազգաբնակչություն ունեցող կամ հայ ժողովրդի հանդեպ բարեկամաբար տրամադրված պետություններ[48]: Պատրիարքը փորձում էր կարգավորել այդ հայ որբերից շատերի հետագա ճակատագիրը, այսինքն՝ անել այնպես, որ նրանք օտար երկրում հայի հետ ընտանիք կազմեին և կապեր հաստատեին տեղի հայ համայնքի հետ՝ պահպանելով իրենց ազգային դիմագիծը[49]: ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերականները քննադատորեն էին անդրադառնում Զավեն պատրիարքի այս ծրագրին՝ պնդելով, թե հայ որբերին չպիտի տարհանեին բնօրրան հայրենիքից՝ չհավատալով, որ օտար երկրում հայ երեխաները հայ կմնային[50]: Թուրքական իշխանությունները ոչ միայն սպառնագրեր էին ուղարկում պատրիարքին, այլև հասկացնում էին, որ դեմ են նրա հայափրկիչ ծրագրերին: Հայր Զավենին չէին հանդուրժում ոչ միայն այն բանի համար, որ նա տեղեկագիր էր ուղարկել Ազգերի դաշնակցության լիգա, այլև 1920 թ. Կիլիկիայի հայերին փրկելու խնդրանքով մեկնել էր Ֆրանսիա և դիմել ֆրանսիական կառա- վարությանը՝ օգնության ակնկալիքով: Թեև այդ առաքելությունը չծառայեց իր նպատակին, ու պաշտոնական Ֆրանսիան ձեռք չմեկնեց, բայց պատրիարքի այցը համարվեց Թուրքիայի դեմ ուղղված դավաճանություն[51]: Քեմալական կառավարությունը Զավեն պատրիարքին չներեց նաև այն պատճառով, որ նրա նախաձեռնությամբ 1922 թ. հունիսի 4-ին կրկին բողոքագիր էր ուղարկվել Ազգերի դաշնակցության լիգա: Դրանով քննադատվում և մերժվում էր 1922 թ. ապրիլի 20-ին Թուրքիայում ընդունված՝ հայերի լքյալ գույքերի վերաբերյալ այն օրենքը, որը կառավարությանը թույլ էր տալիս բռնագրավել «թշնամի յարձակումէն ազատագրուած շրջաններէն մեկնած անձերուն գոյքերը»[52]:

Անկախ թուրքական իշխանությունների՝ հայության հանդեպ իրականացրած հայրենազրկման և ազգակործան քաղաքականությունից՝ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը արել է հնարավոր և անհնար ամեն ինչ, որ իր հոտը փրկի բնաջնջումից: Նա գիտակցել է, թե ում հետ գործ ունի՝ հանձինս, մի կողմից՝ թուրքական և եվրոպական կառավարությունների, մյուս կողմից՝ ազգային կուսակցությունների և հասարակական մարմինների ու

---

[46] Ժողովրդի ձայն (Ժամանակ), 11.II.1921:
[47] Ճակատամարտ, 1922, N 992:
[48] Նույն տեղում, 1922, N 1330:
[49] **Ավագյան Ք.,** նշվ. աշխ., էջ 175-177, 196-201:
[50] Ճակատամարտ, 1922, N 1330:
[51] **Կորյուն աբեղա Բաղդասարյան,** Մոռացված տապանաքարը (տե՛ս www.armworld.am).
[52] **Լեւոն Վարդան,** նշվ. աշխ., էջ 271-272:

կառույցների: Հայր Զավենը կյանքից և պաշտոնից առավել է դասել ազգային շահը, իսկ իր հասցեին հնչած քննադատություններն ու իր հանդեպ իրագործված հալածանքները նա ընդունել է քրիստոնեաբար՝ դասեր քաղելով տեսածից և ապրածից: Նա իրեն վստահված քրիստոնյա համայնքի հավատքի ու փրկության գործին զինվորագրված զորապետ էր, որը 1918 թ. Սարդարապատի ճակատամարտի օրհասական պահերին ամենայն հայոց Գևորգ V կաթողիկոսից խնդրում էր իրեն V դարի եկեղեցական գործիչների նման ուղարկել մարտադաշտ՝ զորքին ոգևորելու նպատակով[53]*:*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАТРИАРХА ЗАВЕНА НА СТРАНИЦАХ КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ ДАШНАКСКОЙ ПЕРИОДИКИ (1909-1915, 1918-1922 ГГ.)

ОВСЕПЯН М. В.

Резюме

Издававшиеся в Османской Турции дашнакские и продашнакские периодические издания в 1909-1915 гг. и 1918-1922 гг. подробно освещали деятельность патриарха и патриархата. Другие средства информации также обращались к деятельности этого важного института, но не были столь строги в своих оценках, как дашнакская периодика. Но при всем при этом дашнакская и продашнакская пресса с пиитетом относилась к последнему патриарху западных армян – Завену архиепископу Тер-Егиаяну, критически оценивая деятельность духовенства, а не патриарха. Патриарх Завен был большим патриотом, снискавшим любовь и уважение армянского народа.

THE COVERAGE OF PATRIARCH ZAVEN ACTIVITIES IN PRO-ARF PERIODICALS OF CONSTANTINOPLE (1909-1915, 1918-1922)

M. HOVSEPYAN

Abstract

The periodicals published in Ottoman Turkey by the Armenian Revolutionary Federation (ARF) and the pro-ARF papers in 1909-1915 and 1918-1922 kept the activity of the Patriarch and the Patriarchate in the spotlight. This does not mean, however, that other Western Armenian periodicals were indifferent to the activity of that important national institution. Simply, the pro-ARF papers were more radical in their assessments and mostly critical of the Patriarch's activity, demanding more than the Patriarchate was eligible to do in Ottoman Turkey. However, periodicals published by the Armenian Revolutionary Federation or those favouring the Party had a respectful attitude towards Zaven Archbishop Ter-Yeghiyan – the last Western Armenian Patriarch, although he was also being criticized between the lines. Zaven Archbishop Ter-Yeghiyan was an exceptional patriot and a devoted person, who enjoyed the respect of the whole nation during the two terms of his rule (1993-1916 and 1918-1922). This found its expression in the Western Armenian press of the time.

---

[53] *Արամը, Ե., 1991, էջ 517 (տե՛ս* **Շահխաթունի Ա.,** *Սարդարաբադի հերոսամարտը և մահափորձ Արամ փաշայի դեմ, էջ 508-521):*